



ԵՐԵՎԱՆԻ
ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑԱՆԱԿ 2017

2017թ. ՀՈՒԼԻՍԻ 18-ին մայրաքաղաքի «Կոնգրես» հյուրանոցում տեղի ունեցավ ԵՄԱ ամենամյա մրցանակի հանձնման արարողությունը, որը նվիրված էր Երևանի մամուլի ակումբի հիմնադրման 22-րդ տարեդարձին:

ԵՄԱ ամենամյա մրցանակը սահմանվել է 1998-ից և տրվում է Հայաստանի լավագույն լրագրողներին, ՁԼՄ-ներին և մեդիա-կազմակերպություններին:

2005 թվականին, 10 ամյակի առթիվ, ԵՄԱ վարչությունը ավանդույթ է ձևավորել՝ շնորհելու նաև անվանական մրցանակներ կյանքից անժամանակ հեռացած այն գործընկերների հիշատակին, որոնք կազմակերպության կայացման և զարգացման գործում մեծ ավանդ են ունեցել. Վալերի Այդինյան, [Տիգրան Նաղդալյան](#), [Ռուբեն Մանգասարյան](#), [Արմեն Նիկողոսյան](#):

2017թ. ԵՄԱ ամենամյա մրցանակաբաշխության արարողության ժամանակ հանձնվեցին նաև ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ և Համայնքների ֆինանսիստների միավորման հետ համագործակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀաՄաՏեղ) ծրագրի հատուկ մրցանակները:

Երևանի մամուլի ակումբի 2016-2017թթ. մրցանակակիրներ

Արմեն Նիկողոսյանի անվան մրցանակ



Հակոբ ԲԵՆԲԵՐՅԱՆ, լուսանկարիչ՝ Հայաստանի մարզական կյանքի պրոֆեսիոնալ լուսաբանման համար: Մրցանակը հանձնեց Արմեն Նիկողոսյանի անվան մրցանակի առաջին դափնեկիր, մարզական լրագրող Վերա Մարտիրոսյանը:

Վալերի Այդինյանի անվան մրցանակ



Նարինե ՂԱԼԵՅՅԱՆ, «Ազատություն» ռադիոկայանի լրագրող, հաղորդավար՝ որակյալ լրագրությունը եւ նորարարությունը լավագույնս համադրելու համար: Մրցանակը հանձնեցին ԵՄԱ փոխնախագահ Ավետ Դեմուրյանը եւ Վալերի Այդինյանի այրին՝ Կարինե Բաբաջանյանը:

Տիգրան Նաղդալյանի անվան մրցանակ



Տիգրան ԴԱՆԻԵԼՅԱՆ, Հայաստանի Հանրային հեռուստատեսության հատուկ նախագծերի խմբագիր՝ հակամարտության պայմաններում Սիրիայի հայ համայնքի կյանքը պատկերող «Պատերազմի եւ խաղաղության կռիվը» ֆիլմաշարի համար: Մրցանակը հանձնեց ԵՄԱ խորհրդի անդամ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն Նունե Սարգսյանը:

ԵՄԱ մրցանակ



«ՌԵՎԻՈՆ» հետազոտական կենտրոն՝ Հայաստանի առցանց մեդիայում եւ սոցիալական ցանցերում 2017թ. խորհրդարանական ընտրությունների լուսաբանման հետազոտության համար: Մրցանակը հանձնեց ԵՄԱ վարչության անդամ, մեդիա փորձագետ Մեսրոպ Հարությունյանը:

ԵՄԱ մրցանակ



SUT.AM կայք՝ կեղծ տեղեկատվության տարածմանը դիմագրավելու նախաձեռնության համար: Մրցանակը հանձնեց ԵՄԱ խորհրդի անդամ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ Աշոտ Մելիքյանը:

ԵՄԱ մրցանակ



Լուսինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ազատ լրագրող՝ հրապարակախոսական նյութի ինքնատիպ մատուցման համար: Մրցանակը հանձնեց Երևանի մամուլի ակումբի վարչության անդամ, Համաշխարհային բանկի Երևանյան գրասենյակի արտաքին կապերի պատասխանատու Վիգեն Սարգսյանը:

Երևանի մամուլի ակումբի և Համայնքների ֆինանսիստների միավորման հատուկ մրցանակ



«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» հեռուստաընկերություն՝ տեղական ինքնակառավարման խնդիրները հետևողականորեն լուսաբանելու համար: Մրցանակը հանձնեց Համայնքների ֆինանսիստների միավորման նախագահ Վահան Մովսիսյանը:

Երևանի մամուլի ակումբի և Համայնքների ֆինանսիստների միավորման հատուկ մրցանակ



Երանուհի ՍՈՂՈՅԱՆ, Hetq.am-ի թղթակից՝ տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումների թեմային հավատարմության համար: Մրցանակը հանձնեց «Համայնք-ՀաՄաՏեղ» թերթի խմբագիր Արեւհատ Գրիգորյանը: